ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 11

Հումանիտար առարկաների առարկայական մասնախմբի նիստի

Նիստը կայացել է 2026 թվականի հունիսի 26-ին:
Նիստին մասնակցել են հումանիտար առարկաների առարկայական մասնախմբի բոլոր անդամները:

Օրակարգում՝

1. Նիստի օրակարգի ներկայացում (զեկուցող՝ մասնախմբի ղեկավար Հ. Փիրումյան)
2. Նախորդ նիստի որոշումների կատարման մասին մասնախմբի ղեկավարի զեկուցում:
3. Մեթոդական միավորման անդամների տարեկան հաշվետվությունների ներկայացում և մեթոդական միավորման ղեկավարի տարեկան հաշվետվության նախագծի քննարկում (զեկուցող՝ մասնախմբի անդամներ և ղեկավար Հ. Փիրումյան):

Լսեցին՝

1. Հումանիտար առարկաների մասնախմբի ղեկավար Հ. Փիրումյանը ներկայացրեց հունիսի 26-ի նիստի օրակարգը՝ բաղկացած 3 հարցից:

Լսեցին՝

2. Հումանիտար առարկաների մասնախմբի ղեկավար Հ. Փիրումյանը զեկուցեց նախորդ նիստի որոշումների կատարման վերաբերյալ՝ նշելով, որ մանկավարժները ծանոթացել են տարեկան հաշվետվությունների նոր ձևաչափին և սահմանված պահանջներին համապատասխան ներկայացրել իրենց աշխատանքների տարեկան ամփոփ հաշվետվությունները: Հաշվետվությունների կազմման ընթացքում մասնախմբի ղեկավարի կողմից, ըստ անհրաժեշտության, տրամադրվել է մեթոդական և խորհրդատվական աջակցություն: Նշվեց նաև, որ մասնախմբի բոլոր անդամների կողմից սահմանված ժամկետներում վերանայվել են թեմատիկ պլանները՝ հստակեցնելով յուրաքանչյուր դասի նպատակներն ու ակնկալվող վերջնարդյունքները: 7-րդ Բ դասարանում «Հայրենագիտություն» առարկայից իրականացված նախագծային աշխատանքի վերաբերյալ գրավոր հաշվետվությունը ներկայացվել է տնօրենին, իսկ նախագծի պլանն ու արդյունքը (պրոդուկտը)՝ էլեկտրոնային կառավարման մասնագետին՝ պաշարների շտեմարանում տեղադրելու նպատակով: Միաժամանակ իրականացվել է սովորողների ԱՈՒՊ-ների տարեկան ամփոփումը:

Լսեցին՝

3. Հումանիտար առարկաների մասնախմբի անդամները ներկայացրին իրենց տարեկան հաշվետվությունների ամփոփ տեղեկատվությունը՝ անդրադառնալով ուսումնական տարվա ընթացքում կատարված աշխատանքներին, ուսումնական ծրագրերի իրականացման ընթացքին, կիրառված մեթոդներին, մասնագիտական զարգացմանն ուղղված միջոցառումներին, արձանագրված արդյունքներին, ինչպես նաև աշխատանքային հաջողություններին և հանդիպած դժվարություններին: Այնուհետև մեթոդական միավորման ղեկավար Հ. Փիրումյանը ներկայացրեց իր տարեկան հաշվետվության նախագիծը, որում ամփոփված էին մեթոդական միավորման գործունեությունը, իրականացված աշխատանքները, ձեռքբերումները, առկա խնդիրներն ու հաջորդ ուսումնական տարվա հիմնական անելիքները: Նշվեց նաև, որ բոլոր անդամների կողմից առարկայական ծրագրերն իրականացվել են թեմատիկ պլաններին համապատասխան, իսկ

տոնական և ոչ աշխատանքային օրերի պատճառով առաջացած բացթողումները լրացվել են պահուստային ժամերի և թեմաների խտացման միջոցով՝ ապահովելով ուսումնական ծրագրերի ամբողջական կատարումը:

Որոշում է

1. Հաստատել հումանիտար առարկաների առարկայական մասնախմբի 2026 թվականի հունիսի 26-ի նիստի օրակարգը:
2. Նախորդ նիստի որոշումների կատարման վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն՝ արձանագրելով, որ մանկավարժների տարեկան հաշվետվությունները կազմվել և ներկայացվել են սահմանված պահանջներին համապատասխան, վերանայվել են թեմատիկ պլանները, իրականացվել է նախագծային աշխատանքի հաշվետվությունների հանձնաման և թվային հարթակում տեղադրման գործընթացը և սովորողների ԱՈՒՊ-ների տարեկան ամփոփումը՝ ապահովելով նախորդ նիստի որոշումների լիարժեք և ժամանակին կատարումը:
3. Մեթոդական միավորման անդամների տարեկան հաշվետվությունների և մեթոդական միավորման ղեկավարի տարեկան հաշվետվության նախագծի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն՝ արձանագրելով, որ ուսումնական տարվա ընթացքում իրականացվել են նախատեսված աշխատանքները, ապահովվել է ուսումնական ծրագրերի ամբողջական կատարումը և մեթոդական միավորման գործունեության արդյունավետ կազմակերպումը:
4. Հանձնարարել մեթոդական միավորման ղեկավարին վերջնականացնել մեթոդական միավորման տարեկան հաշվետվությունը՝ հաշվի առնելով նիստի ընթացքում ներկայացված առաջարկություններն ու դիտարկումները, և այն ներկայացնել 2026 թվականի հունիսի 30-ի մանկավարժական խորհրդի նիստում:

Առարկայական մասնախմբի ղեկավար՝ **Հ. Փիրումյան**

Քարտուղար՝ **Ա. Օհանյան**

29.06.2026